


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Դայմենշն» ՓԲԸ
Տնօրենների խորհրդի
27.04.2023թ.-ի նիստի կողմից
Խորհրդի նախագահ՝



Դավիթ Հակոբյան

«ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ

ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
ԳԼՈՒԽ 2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ.....	3
ԳԼՈՒԽ 3. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԵՎ ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	7
ԳԼՈՒԽ 4. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ և ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ	8
ԳԼՈՒԽ 5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԵՐԺՈՒՄԸ.....	8
ԳԼՈՒԽ 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	9
ԳԼՈՒԽ 7. ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....	9
ԳԼՈՒԽ 8. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ.....	11
ԳԼՈՒԽ 9. ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ԹԱՐՄԱՑՈՒՄ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ	12
ԳԼՈՒԽ 10. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՈՐԱԿԵԼԸ.....	14
ԳԼՈՒԽ 11. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄԸ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ	15
ԳԼՈՒԽ 12. ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄԸ	16
ԳԼՈՒԽ 13. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ	17
ԳԼՈՒԽ 14. ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ, ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ	18
ԳԼՈՒԽ 15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	19
ԳԼՈՒԽ 16. ՓԼ/ԱՖ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ	19
ԳԼՈՒԽ 17. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	19

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն փաստաթուղթը (այսուհետ՝ Ընթացակարգ) սահմանում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման նպատակով գործարքների համակողմանի վերլուծության, որպես կասկածելի որակման, գործարքի մերժման կամ գործարար հարաբերության դադարեցման, կասկածելի գործարքների կասեցման, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքի սառեցման, պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը:

1.2. Ընթացակարգի պահանջները պարտադիր են Ընկերության բոլոր ստորաբաժանումների և աշխատակիցների համար

1.3. Ընթացակարգով կանոնակարգվող գործընթացի պատասխանատուն է դիտարկումների ստորաբաժանումը:

1.4. Ընթացակարգը մշակվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Փողերի լվացման և Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, այլ կիրառելի օրենքների, դրանց հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերի (մասնավորապես՝ ԿԲ նորմատիվ իրավական ակտերի), Ընկերության կանոնադրության և համապատասխան ներքին իրավական ակտերի հիման վրա:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

2.1 Կանոններում օգտագործվող հաղկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

- «Ընկերություն»՝ «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ,
- «Լիազոր մարմին (ԼՄ)»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
- «Կասկածելի գործարք կամ գործարար հարաբերություն» գործարք կամ գործարար հարաբերություն, որի դեպքում կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ

ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից,

- «Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժում»՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման համար նախատեսված գործողություններ չիրականացում,
- «Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում»՝ կասկածելի գործարքի և (կամ) գործարար հարաբերության առարկա գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելք,
- «Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցում»՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության իրականացման ընդհատում,
- «Գույքի սառեցում»՝ ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքի փաստացի և (կամ) իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելք, այդ թվում՝ այդ գույքի ուղղակի կամ անուղղակի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման արգելք, ինչպես նաև՝ որևէ գործարար հարաբերության (ներառյալ՝ ֆինանսական ծառայությունների) կամ միանգամյա գործարքների հաստատման կամ իրականացման արգելք,
- «ՓԼ/ԱՖ»՝ փողերի լվացում և ահաբեկչության ֆինանսավորում,
- «ԶՈԶ»՝ զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորում,
- «Ներքին ազդակներ»՝ Ընկերության աշխատակիցների, կառավարման մարմինների և ներքին աուդիտի ստորաբաժանման, ինչպես նաև՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցների կողմից կասկածելիության հատկանիշներով կամ ՓԼ/ԱՖ առկայությունը վկայող այլ հատկանիշներով հնարավոր կասկածելի գործարքի և գործարար հարաբերությունների վերաբերյալ ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակցին փոխանցված ազդակները,
- «Արտաքին ազդակներ»՝ ԼՍ-ից, իրավասու մարմիններից, այլ հաշվետու անձանցից, օտարերկրյա գործընկերներից, ինչպես նաև սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի տեղեկատվական աղբյուրներից ստացված ազդակներ,
- «Սեփական նախաձեռնությամբ վեր հանված ազդակներ»՝ ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակցի գործառույթների իրականացման արդյունքում վեր հանված ազդակներ,
- «Գործարքի կատարման պահ»՝ Փոխանցումների դեպքում՝ հաճախորդի կողմից տրված հանձնարարականի հիման վրա հաճախորդի հաշվի դեբետագրման պահը (կամ հաճախորդի կողմից փաստացի գումարի մուծման և փոխանցման հանձնարարականի տրման պահը անհաշիվ - փոխանցում)՝ անկախ այն հանգամանքից, թե այդ պահին փոխանցումը կատարվել է, թե՛ ոչ: Ստացումների դեպքում՝ հաճախորդի հաշիվը կրեդիտագրելու պահը, եթե

ստացողը Ընկերության հաճախորդ է (ունի Ընկերությունում բացված հաշիվ), կամ հաճախորդի՝ գումարը ստանալու նպատակով ներկայանալու օրը, եթե հաճախորդը Ընկերությունում չունի հաշիվ, (անհաշիվ փոխանցում), իսկ մնացած այլ դեպքերում՝ իրավունքների և/կամ պարտականությունների առաջացման պահը, արժեթղթերի փոխանցման դեպքում՝ դրանով հավաստվող բոլոր իրավունքների փոխանցման պահը,

- «ՀՍՍ»՝ հաճախորդների սպասարկման ստորաբաժանում,
- «ՆԴՍ»՝ Ներքին դիտարկումների ստորաբաժանում,
- «Ներքին դիտարկումների ստորաբաժանման ղեկավար»՝ ՀՀ օրենսդրության և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով Ընկերությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործընթացի կազմակերպում և աշխատանքների համակարգում իրականացնող աշխատակից (գործառույթների ամբողջական շրջանակը ներկայացված է ներքին դիտարկումների ստորաբաժանման ղեկավարի աշխատատեղի նկարագրում)
- «ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակից»՝ Ներքին դիտարկումների ստորաբաժանման ՓԼ/ԱՖ գործառույթների ապահովման համար պատասխանատու աշխատակից,
- «Ավագ ղեկավարությունը»՝ Ընկերության այն մարմինը կամ աշխատակիցը, որն իրավասու է Ընկերության անունից փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման կանխարգելման հարցերով որոշումներ կայացնելու և գործողություններ կատարելու,
- «ՀՊՈԻ»՝ Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն,
- «Քաղաքական ազդեցություն ունեցող անձ»՝ պետական, քաղաքական կամ հանրային բնույթի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունում նշանակալից գործառույթներ իրականացրած կամ իրականացնող անձն է (այդ թվում՝ նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ սերտորեն փոխկապակցված անձը): Ընդ որում, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի հանրային գործառույթներ իրականացնող անձանց: Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք են մասնավորապես՝
 - պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները,
 - խորհրդարանի անդամները,
 - բարձրագույն ատյանի դատարանի, սահմանադրական դատարանի կամ այլ բարձր դատական ատյանների դատավորները, անդամները, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքներով պայմանավորված բողոքարկման դեպքերի,
 - կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները և խորհրդի անդամները,

- դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները,
 - քաղաքական կուսակցության պաշտոնատար անձինք,
 - պետական սեփականություն հանդիսացող կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները,
 - տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարները,
 - միջազգային կազմակերպության ղեկավարները, ղեկավարի տեղակալները, խորհրդի անդամները կամ կառավարչական կամ վերահսկողական և այլ համանման գործառույթներ իրականացնող մարմինների անդամները: տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարները:
- «Արժեթուղթ»՝ գործիք, որը բավարարում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև այլ կիրառելի իրավական ակտերով սահմանված՝ Արժեթղթերի վավերապայմաններին,
 - «Գործընկեր»՝ անձ, որի հետ Ընկերությունը կնքել է կամ պատրաստվում է կնքել ցանկացած գործարք կամ հաստատել ցանկացած գործարար հարաբերություն,
 - «Կանոնադրություն»՝ Ընկերության կանոնադրությունը,
 - «Ժողով»՝ Ընկերության կառավարման բարձրագույն մարմին, որը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և Կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է Ընկերության գործունեության բարձրագույն ղեկավարում,
 - «Հաճախորդ»՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն Ընկերության հետ կնքել է կամ ցանկանում է կնքել ներդրումային և/կամ ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագիր,
 - «ՄԱԿ ԱԽ»՝ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհուրդ,
 - «ԿԲ»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
 - «ԿԴ»՝ Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա,
 - «ԵՄ»՝ Երվրոպական միություն,
 - «ԱԱՀԳ»՝ ԱՄՆ Արտասահմանյան ակտիվների հսկողության գրասենյակ (OFAC),
 - «ՄԹԱԳՆ»՝ Միացյալ թագավորության արտաքին գործերի նախարարություն:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԵՎ ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

3.1 Հավելվածներ

- Հավելված 1. Ճանաչիր քո հաճախորդին հարցաթերթիկ (ֆիզիկական անձ հաճախորդների համար),
- Հավելված 2. Ճանաչիր քո հաճախորդին հարցաթերթիկ (իրավաբանական անձ հաճախորդների համար),
- Հավելված 3. Ֆիզիկական անձանց նույնականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ,
- Հավելված 4. Իրավաբանական անձանց նույնականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ,
- Հավելված 5. Ֆիզիկական անձ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության վերաբերյալ տեղեկանք,
- Հավելված 6. Իրավաբանական անձ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության վերաբերյալ տեղեկանք,
- Հավելված 7. Ունեցվածքի հայտարարագիր,
- Հավելված 8. Իրական շահառուի հայտարարագիր,
- Հավելված 9. Պատժամիջոցների համապատասխանության հավաստիացման ձևաթուղթ,
- Հավելված 10. Հաճախորդների և գործարքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հաստատման նամակ,
- Հավելված 11. Բարձր ռիսկային երկրների ցանկ,
- Հավելված 12. Անընդունելի բարձր ռիսկային երկրների ցանկ,
- Հավելված 13. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի վերաբերյալ հարցաշար՝ գործընկեր ֆինանսական հաստատությունների համար:

3.2 Առնչվող փաստաթղթեր

3.2.1. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք,

3.2.2. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների կանոնակարգ,

3.2.3. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք,

3.2.4. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ քաղաքականություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ և ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՏՈՒԳՈՒՄ

4.1. Գործարար հարաբերությունների հաստատումը իրականացվում է ՆԴՍ համաձայնությունը ստանալուց հետո: ՆԴՍ-ի բացասական կարծիքի դեպքում գործարար հարաբերության հաստատման առաջարկին ընթացք չի տրվում:

4.2. Գործարար հարաբերություն հաստատելիս ընկերությունը նույնականացնում է հաճախորդին և ստուգում է վերջինիս ինքնությունը:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԵՐԺՈՒՄԸ

5.1 ՆԴՍ-ն մերժում է հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը հետևյալ դեպքերում՝

5.1.1 Հնարավոր չէ իրականացնել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին ՀՀ օրենքով սահմանված պատշաճ ուսումնասիրության համար անհրաժեշտ միջոցառումները: 5.1.2. Եթե ֆիզիկական անձ հաճախորդը կամ իրավաբանական անձ հաճախորդի շահառուն, բաժնետերը, տնօրենը ներառված են ՄԱԿ, ԱԱՀԳ, ԵՄ, ՄԹԱԳՆ պատժամիջոցների ցանկերում:

5.1.3. ֆիզիկական անձ հաճախորդը կամ իրավաբանական անձ հաճախորդի շահառուն, բաժնետերը, տնօրենը դատապարտվել են կամ մեղադրվում են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինասավորման համար:

5.1.4. Եթե իրավաբանական անձ հաճախորդը իր գործունեությունը ծավալում է հետևյալ ոլորտներում՝

- կեղծ բանկեր,
- բարեգործական կազմակերպություններ (ներառյալ չկարգավորվող բարեգործական կազմակերպություններ),
- կրիպտոակտիվներով գործառնություններ,
- մոլախաղեր, այդ թվում օնլայն կազինոներ,
- ատոմային էներգետիկա,
- դեսպանատներ,
- մեծահասակների համար հաղորդումներ վաճառք (adult content):

5.1.5 Իրավաբանական անձ Հաճախորդը գրանցված է Հավելված 12-ում թվարկված երկրներում կամ ֆիզիկական անձ Հաճախորդը նշված երկրների ռեզիդենտ է կամ քաղաքացի:

5.2. ՆԴՍ-ն կարող է մերժել Հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու առաջարկը եթե՝

5.2.1. Առկա են արտաքին կամ ներքին ազդակներ առ այն, որ Հաճախորդը կարող է ներգրավված լինել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման մեջ, 5.2.2. Համացանցում կամ Ընկերությանը հասանելի երրորդ անձանց աղբյուրներում հաճախորդի վերաբերյալ հայտնաբերվել է բացասական տեղեկատվություն (այդ թվում՝ հարուցված քրեական գործի վերաբերյալ):

ԳԼՈՒԽ 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Ընկերությունը ֆինանսական հաստատությունների հետ գործարար հարաբերություններ հաստատում է ՆԴՄ դրական եզրակացության առկայության դեպքում: ՆԴՄ-ի բացասական կարծիքի դեպքում գործարար հարաբերությունների հաստատման առաջարկին ընթացք չի տրվում:

ԳԼՈՒԽ 7. ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

7.1. ՓԼ/ԱՖ տեսանկյունից Հաճախորդի կամ գործարքի ռիսկը գնահատվում է որպես միջին, բարձր կամ ցածր՝ ըստ ռիսկը բնութագրող չափանիշների, իսկ մեկից ավելի չափանիշների առկայության դեպքում՝ դրանց համակցությամբ: Ընդ որում՝ եթե առկա է բարձր ռիսկի թեկուզ 1 չափանիշ, ապա ռիսկը գնահատվում է բարձր:

7.2. Ռիսկը գնահատվում է ցածր, երբ առկա են ցածր ռիսկի չափանիշներ:

7.3 Ռիսկը գնահատվում է միջին, երբ բացակայում են բարձր կամ ցածր ռիսկի չափանիշները:

7.4. Ռիսկի գնահատականի համար հիմք են հանդիսանում հետևյալ գործոնները՝

7.4.1 Հաճախորդին վերաբերող ռիսկի գործոններ

7.4.2. Ապրանքին/գործարքին վերաբերող ռիսկի գործոններ

7.4.3. Երկրների կամ աշխարհագրական տեղակայմանը վերաբերող ռիսկի գործոններ

7.5 Նույնականացման արդյունքում Հաճախորդին տրված ռիսկի դասը կարող է փոփոխվել ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակցի առաջարկով, եթե գործարար հարաբերության ընթացքում ի հայտ են գալիս Հաճախորդի ռիսկի մասին վկայող նոր հանգամանքներ:

Բարձր ռիսկի չափանիշներ

7.6 իրավաբանական անձինք կամ կազմավորումները, որոնց գործունեության ոլորտը ակտիվների անհատական տնօրինումն է,

7.7 անվանական բաժնետերեր ունեցող և/կամ անոնիմ սեփականատերերով, ինչպես նաև ըստ ներկայացնողի բաժնետոմսեր թողարկած ընկերությունները,

7.8 սեփականատերերի բարդ և/կամ անսովոր կառուցվածք ունեցող ընկերությունները,

7.9 բարդ և/կամ անսովոր պայմաններով գործարքները, որոնք ակնհայտորեն տնտեսական կամ օրինական նպատակ չեն հետապնդում,

7.10 խոշոր կանխիկ գործառնություններ իրականացնող ընկերությունները,

7.11. անձինք (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունները), որոնք գտնվում կամ բնակվում են ընկերության կողմից սահմանված բարձր ռիսկային երկրներում կամ տարածքներում կամ երկրներում կամ այդպիսի երկրների կամ տարածքների քաղաքացի/ռեզիդենտ են կամ գործունեության ինչ-որ փուլում գտնվել/բնակվել են հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկրներում կամ տարածքներում կամ այդպիսի երկրների կամ տարածքների քաղաքացի/ռեզիդենտ են եղել (երկրները սահմանվում են Հավելված 11-ով),

7.12. անհատականացված ներդրումային ծառայությունների մատուցումը,

7.13. ընկերություններ, որոնց բաժնետերերի կառուցվածքը դժվարեցնում է իրական շահառուի բացահայտումը,

7.14 դեղագործության, առողջապահության, թանկարժեք մետաղների արդյունահանման և առևտրի, պետական գնումների ոլորտում գործունեություն ծավալող ընկերությունները,

7.15 Քաղաքական ազդեցություն ունեցող անձ, նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անձ հանդիսացող հաճախորդները,

7.16 կանխիկի լայնամասշտաբ կիրառությամբ բնութագրվող գործարար հարաբերությունները, ներառյալ՝ դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպություններ, փոխանակման կետեր, խաղատներ, շահումով խաղ կազմակերպող անձինք),

7.17. Սույն Ընթացակարգին կից Հավելված 11-ում նշված բարձր ռիսկային երկրների քաղաքացիները և ռեզիդենտները և/կամ այդ երկրներում գրանցված կամ գործունեություն ծավալող իրաբանական անձինք:

7.18. Գործարքները, որոնք իրականացվում են սույն Ընթացակարգին կից Հավելված 11- ում նված բարձր ռիսկային երկրների քաղաքացիների կամ այդ երկրներում գրանցված կամ գործունեություն ծավալող իրաբանական անձանց հետ:

Ցածր ռիսկի չափանիշներ

7.19. Պետական մարմինները,

7.20 տեղական ինքնակառավարման մարմինները,

7.21. պետական ոչ առևտրային կազմակերպությունները (ՊՈԱԿ),

7.22. պետական կառավարչական հիմնարկները, բացառությամբ Հավելված 11-ում նշված երկրներում գտնվող մարմինների կամ կազմակերպությունների,

7.23. ՓԼ/ԱՖ ՀՀ օրենքով սահմանված այլ ցածր ռիսկի չափանիշներ:

ԳԼՈՒԽ 8. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում հաճախորդների հավելյալ պատշաճ ուսումնասիրություն, ինչը ներառում է առնվազն հետևյալ միջոցառումները.

8.1.1. Հավաքագրվում է Հաճախորդի հետ շփումների ընթացքում ստացված տեղեկատվությունը, ներառյալ՝ փաստաթղթերը, փաստաթղթերի հավաստիության վերաբերյալ հարցեր առաջանալու դեպքում օգտագործվում են տեղեկատվություն սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներ կամ հարցումներ են կատարվում իրավասու մարմիններին և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,

8.1.2. հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը պարզելիս՝ կատարվում է դրանց բազմաստիճան վերլուծություն, այդ թվում պարզվում են հաճախորդի հետ փոխկապակցված անձանց ինքնությունները և հնարավոր անուղղակի կապերը,

8.1.3. համադրվում են հաճախորդի գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները՝ ընտրելով հնարավորինս երկար համադրելի ժամանակահատված,

8.1.4. պարզվում են հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրները, ձեռք են բերվում դրանց օրինականությունը հիմնավորող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր,

8.1.5. ձեռնարկվում են անհրաժեշտ այլ միջոցառումներ,

8.1.6. Քաղաքական ազդեցություն ունեցող անձի դեպքում իրականացվում է ընթացիկ հավելյալ դիտարկում:

8.2. Միջին ռիսկի չափանիշների առկայության դեպքում իրականացվում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն, ինչը ներառում է առնվազն հետևյալ միջոցառումները.

8.2.1 հավաքագրվում է հաճախորդի հետ շփումների ընթացքում ստացված տեղեկատվությունը, ներառյալ՝ փաստաթղթերը, փաստաթղթերի հավաստիության վերաբերյալ հարցեր առաջանալու դեպքում օգտագործվում է տեղեկատվություն սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից կամ հարցումներ են կատարվում իրավասու մարմիններին և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,

8.2.2. համադրվում են հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները, հարաբերությունների միջև կապերի առկայությունը,

8.2.3. պարզվում է Հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը,

8.2.4. ստուգվում է գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը Հաճախորդի գործարար բնութագրին,

8.2.5. հաճախորդից ձեռք են բերվում գործարքը հիմնավորող փաստաթղթեր,
8.2.6. ձեռնարկվում են այլ անհրաժեշտ միջոցառումներ:

8.3. Ցածր ռիսկի չափանիշների առկայության դեպքում իրականացվում է Հաճախորդի պարզեցված պատշաճ ուսումնասիրություն, մասնավորապես՝

8.3.1. ստուգվում է գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ Հաճախորդից պահանջվող տեղեկությունների իսկությունը և հավաստիությունը՝ հիմք ընդունելով Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվությունը,

8.3.2. համադրվում է Հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները միայն այն դեպքում, երբ դրանք գերազանցում են Հաճախորդի գործարար բնութագրի տեսանկյունից ողջամիտ գումարային սահմանաչափը,

8.3.3. պարզվում է Հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը,

8.2.4. ստուգվում է գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը Հաճախորդի գործարար բնութագրին,

8.2.5. հաճախորդից ձեռք են բերվում գործարքը հիմնավորող փաստաթղթեր:

8.2.6. ձեռնարկվում են այլ անհրաժեշտ միջոցառումներ:

ԳԼՈՒԽ 9. ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՏՇԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ԹԱՐՄԱՑՈՒՄ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

9.1. ՆԴՍ-ն գործարար հարաբերությունների ողջ ընթացքում իրականացնում է պատճաշ ուսումնասիրություն՝ հաճախորդի, նրա գործարար բնութագրի և ռիսկայնության վերաբերյալ գործարար հարաբերություն հաստատելու ընթացքում տրամադրված տեղեկությունների հավաստիության, այդ տեղեկությունների հետ հաճախորդի գործունեության համադրելիության, իսկ անհրաժեշտության դեպքում նաև հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրի իսկության հարցում հավաստիանալու նպատակով:

9.2. Հաճախորդների եկամուտների և ունեցվածքի աղբյուրի իսկության հավաստման համար հաճախորդից պահանջվում են հիմնավորող փաստաթղթեր (ինչպիսիք են օրինակ՝ բանկային հաշվի քաղվածքներ, ժառանգության վկայականներ, փոխառության պայմանագրեր, առուվաճառքի պայմանագրեր և այլն), ինչպես նաև Հաճախորդի կողմից լրացված եկամուտների ծագման աղբյուրի վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն Հավելված 7-ի:

9.3. Հաճախորդի պատճաշ ուսումնասիրության շրջանակում հավաքագրված տեղեկությունների (ներառյալ հաճախորդների իրական շահառուի/ների կազմում

հնարավոր փոփոխությունները հայտնաբերելու նպատակով) արդիականության հարցում հավաստիանալու նպատակով ՆԴՍ-ն իրականացնում է հաճախորդի տվյալների թարմացում հետևյալ պարբերականությամբ.

9.3.1. երկու տարին մեկ անգամ՝ ցածր ռիսկի դեպքում,

9.3.2. տարին մեկ անգամ՝ միջին ռիսկի դեպքում,

9.3.3. վեց ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկի դեպքում,

9.3.4. երեք ամիսը մեկ անգամ՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց դեպքում:

9.4. Գործընկեր ֆինանսական կազմակերպությունների վերաբերյալ տվյալների թարմացումն իրականացվում է տարեկան պարբերականությամբ:

9.5. Տվյալների թարմացման նպատակով իրավաբանական անձ հաճախորդներից և գործընկերներից պահանջվում են իրավասու մարմնի կողմից տրամադրված՝ 6 ամսվա վաղեմությամբ փաստաթղթեր ընթացիկ բաժնետերերի և տնօրենի վերաբերյալ, տվյալների թարմացման և ուսումնասիրության վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն հավելվածների, գործընկերների դեպքում՝ նաև Wolfsberg խմբի հարցաշարը և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի վերաբերյալ ներքին իրավական ակտերը:

9.6. Տեղեկությունների թարմացումը կատարվում է ՀՍՍ կողմից:

9.7. Եթե ՆԴՍ-ն չի կարողանում ձեռք բերել հավաստի տեղեկություններ հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրների օրինականության վերաբերյալ, ապա պահանջում է դադարեցնել գործարար հարաբերությունը՝ դիտարկելով Կասկածելի գործարքի հաշվետվություն ուղարկելու անհրաժեշտությունը:

9.8. Առնվազն եռամսյակը 1 անգամ ՆԴՍ-ն դիտանցում է Կասկածելի ճանաչված գործարքի կամ գործարար հարաբերության մասնակից Հաճախորդների գործարքները:միայն այն դեպքում, երբ ի հայտ են եկել միջին կամ բարձր ռիսկայնության հաճախորդների, գործարքների կամ գործարար հարաբերությունների հետ կապեր:

9.9. Քաղաքական ազդեցություն ունեցող անձ համարվող Հաճախորդների դեպքում իրականացվում է գործարքների ընթացիկ հավելյալ դիտանցում՝ ամսական կտրվածքով:

9.10. ՆԴՍ-ն եռամսյակը մեկ անգամ վերլուծում է բարձր ռիսկի գնահատական ունեցող հաճախորդների գործարքները ստուգելով հաճախորդների վերաբերյալ նոր տեղեկությունների և փաստերի առկայությունը Ընկերությանը հասանելի երրորդ անձ աղբյուրներում և համացանցում, ինչը հայտնի չի եղել գործարար հարաբերություն հաստատելիս կամ նախորդ ուսումնասիրության ժամանակ:

9.11. ՆԴՍ-ն առնվազն կիսամյակը մեկ անգամ դիտանցում է նախորդ կիսամյակում իրականացված բոլոր գործարքները՝ առաջնորդվելով ռիսկայնության գործոններով:

9.12. ՄԱԿ-ի, ԱԱՀԳ, ԵՄ, ՄԹԱԳՆ ցանկերի թարմացումների դեպքում ՆԴՍ-ն ծրագրային լուծման միջոցով իրականացնում է գործող Հաճախորդների և Գործընկերների ավտոմատ ստուգում ցանկերում Հաճախորդների այդ

ներառվածությունը բացահայտելու նպատակով: Այդպիսի ներառվածության բացահայտման դեպքում իրականացվում են սույն ընթացակարգի 5-րդ կետի 5.1. ենթակետով նկարագրված միջոցառումները:

9.13. Դիտանցման արդյունքները, այդ թվում՝ վերլուծության ընթացքը և ՆԴՍ եզրահանգումները (Հավելված 5-ի և Հավելված 6-ի համաձայն) փաստաթղթավորվում են և պահպանվում են՝ առնվազն 5 տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 10. ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՈՐԱԿԵԼԸ

10.1. ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակիցը գործարքը կամ հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացը սկսում է.

10.1.1. ներքին ազդակների ստացման դեպքում,

10.1.2. արտաքին ազդակների ստացման դեպքում,

10.1.3. ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակցի սեփական նախաձեռնությամբ վեր հանված ազդակների դեպքում,

10.1.4. հաճախորդի կամ գործարքի մյուս կողմի նույնականացման տվյալների և ահաբեկչության և (կամ) զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց կամ ԼՄ հանձնարարականներում նույնականացման տվյալների համընկնումների դեպքում,

10.1.5. գործարքի կամ գործարար հարաբերության՝ մերժման կամ դադարեցման դեպքում,

10.1.6. ՓԼ/ԱՖ մասին վկայող այլ հանգամանքներ ի հայտ գալու դեպքում:

10.2. ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակիցը սույն ընթացակարգի 10.1. կետում թվարկված դեպքերում սկսում է համակողմանի վերլուծության գործընթացը՝ մասնավորապես՝

10.2.1. կատարում է համապատասխան որոնումներ հասանելի տեղեկատվական աղբյուրներում,

10.2.2. կատարում է համապատասխան համադրումներ հաճախորդների նույնականացման տվյալների և ընկերությանը հասանելի աղբյուրներում ներառված անձանց նույնականացման տվյալների միջև,

10.2.3. ներքին ազդակի դեպքում՝ գործարքի կամ գործարար հարաբերության մանրամասները քննարկում է ներքին ազդակ տրամադրած աշխատակցի հետ,

10.2.4. անհրաժեշտության դեպքում, ճշտումներ է կատարում ԼՄ ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ,

10.2.5. Եթե համակողմանի վերլուծության արդյունքում հնարավոր կասկածները հաստատվում են և գործարքը կամ գործարար հարաբերությունը որակվում է որպես կասկածելի, ապա նույն օրը համապատասխան Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացվում ԼՄ-ին:

10.2.6. գործարքը կամ գործարար հարաբերությունը Կասկածելի որակելով չորակելու հիմնավորումները, այդ թվում՝ վերլուծության ընթացքը և ՆԴՍ եզրահանգումները (Հավելված 6-ի համաձայն) փաստաթղթավորվում և պահպանվում են՝ առնվազն 5 տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 11. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄԸ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

11.1. Գործարքը կամ գործարար հարաբերությունը մերժվում կամ դադարեցվում է Ավագ ղեկավարի կողմից՝ հետևյալ ազդակներից որևիցե մեկի առկայության դեպքում

11.1.1. ԼՄ համապատասխան հանձնարարականի հիման վրա,

11.1.2. Եթե հնարավոր չէ իրականացնել սույն ընթացակարգով սահմանված կարգով իրականացնել հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն

11.1.3. Կասկածներ են առաջանում հաճախորդի նույնականացմանը վերաբերվող՝ նախկինում ձեռք բերված տեղեկությունների հավաստիության կամ ամբողջականության վերաբերյալ,

11.1.4. նոր հանգամանքների ի հայտ գալը՝ օրինակ՝ Գործընկերոջ՝ փողերի վաճառման մեջ մեղադրվելը կամ սեփականատերերի կազմում փոփոխությունները, ՄԱԿ, ԱԱՀԳ, ԵՄ, ՄԹԱԳՆ պատժամիջոցների ցանկերում ներառվածությունը և այլն,

11.1.5. Կասկածներ են առաջանում ՓԼ/ԱՖ վերաբերյալ:

11.2. ՓԼ/ԱՖ _ պատասխանատու աշխատակիցը ԼՄ-ից գործարքի կամ գործարար հարաբերության մերժման վերաբերյալ հանձնարարական ստանալու դեպքում, պարզում է արդյոք հանձնարարականում նշված անձը հանդիսանում է ընկերության հաճախորդ կամ գործընկեր: Դրական արդյունքի դեպքում ԼՄ հանձնարարականի կատարման անհրաժեշտության մասին տեղեկացվում է ՀՍՍ-ն Հաճախորդի կամ Գործընկերոջ հետ գործարար հարաբերությունը դադարեցնելու համար համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով: Բացասական արդյունքի դեպքում - ԼՄ հանձնարարականի պահանջները իրականացվում են հետագայում համընկնումներ ի հայտ գալու դեպքում:

11.3. ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակիցը, գործարքի կամ գործարար հարաբերության մերժման կամ դադարեցման վերաբերյալ սույն ընթացակարգի գլուխ 10-ում նկարագրված ազդակ ստանալու դեպքում ուսումնասիրում է այն, անհրաժեշտության դեպքում քննարկում սպասարկող աշխատակցի հետ, կատարում լրացուցիչ պարզաբանումներ: Եթե սույն կետում նկարագրված գործողությունների արդյունքում ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակիցը համոզվում է, որ առկա են գործարքը կամ գործարար հարաբերությունը մերժելու կամ դադարեցնելու

անհրաժեշտ հիմքերը, ապա ներկայացնում է Ներքին դիտարկումների ստորաբաժանման ղեկավարի քննարկմանը:

11.4. 11.4. Քննարկման արդյունքում, եթե որոշվում է մերժել կամ դադարեցնել գործարքը կամ գործարար հարաբերությունը, ապա ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակիցը այդ մասին անմիջապես տեղեկացնում է ՀՍՍ-ին և սկսում է իրականացնել համակողմանի վերլուծություն՝ գործարքը կամ գործարար հարաբերությունը որպես կասկածելի դիտարկելու նպատակով:

11.5. ՆԴՄ-ի՝ գործարքը կամ գործարար հարաբերությունը որպես Կասկածելի որակելու մասին եզրակացության դեպքում քննարկվում է հաշվի փակման նպատակահարմարությունը, ինչպես նաև իրականացվում են Կասկածելի գործարքների/գործարար հարաբերությունների առնչությամբ կիրառելի օրենսդրությամբ և սույն ընթացակարգով նախատեսված անհրաժեշտ քայլերը:

ԳԼՈՒԽ 12. ԱՎԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄԸ

12.1. Գույքը սառեցվում է, եթե՝

12.1.1. Հաճախորդի, գործընկերոջ կամ գործարքի կողմի նույնականացման տվյալները համընկել են ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության և(կամ) զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում ներառված անձանց նույնականացման տվյալների հետ:

12.1.2. Նույնականացման տվյալների՝ սույն ընթացակարգի 12.1. կետում նախատեսված համընկնման դեպքում ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակիցը իրականացնում է համապատասխան համադրումներ և եթե դրանց արդյունքում պարզվում է, որ Հաճախորդը, Գործընկերը կամ գործարքի կողմը ներառված են սույն ընթացակարգի 12.1. կետում նախատեսված ցանկերում, ինչպես նաև այն դեպքերում, երբ հնարավոր չէ հավաստիանալ սույն կետում նշված անձանց՝ այդ ցուցակներում բացակայության հարցում, խնդիրը քննարկում է Ներքին դիտարկումների ստորաբաժանման ղեկավարի հետ և ԼՄ-ին ներկայացնում է Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

12.1.3. Գույքի սառեցումը վերացվում է կամ ԼՄ-ի որոշմամբ, կամ այն դեպքում, երբ անձը, որի միջոցները սառեցվել են, հանվել է ահաբեկչության հետ կապված անձանց ցանկից:

ԳԼՈՒԽ 13. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ

13.1. Գործարքը/գործարար հարաբերությունը կասեցվում է՝

13.1.1. ԼՄ-ից գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու վերաբերյալ հանձնարարական ստանալու դեպքում,

13.1.2. ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակցի նախաձեռնության դեպքում՝ Ներքին դիտարկումների ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ,

13.1.3 ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակիցը, ԼՄ-ից ստանալով գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու վերաբերյալ հանձնարարականը, պարզում է հանձնարարականում նշված անձի հաճախորդ կամ գործընկեր լինելու հանգամանքը և դրական արդյունքի դեպքում կասեցումն ապահովելու նպատակով տեղեկացնում է ՀՍՍ-ին:

13.1.4. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու դեպքում ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակիցը կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Մ-ին՝ սույն ընթացակարգով սահմանված կարգով:

13.1.5. Եթե սույն ընթացակարգի գլուխ 10-ում նկարագրված գործողությունների արդյունքում գործարքը կամ գործարար հարաբերությունը որակվում է կասկածելի, ապա գործարքում ներգրավված միջոցների տեղաշարժը կանխելու, հնարավոր այլ ռիսկերը զսպելու, միջոցների արտահոսքը կանխելու նպատակով, ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակիցը կարող է Կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը մինչև հինգ օրով կասեցնելու վերաբերյալ առաջարկ ներկայացնել Ներքին դիտարկումների ստորաբաժանման ղեկավարին: Ընդ որում կասեցումը կարող է երկարաձգվել համաձայն ՓԼ/ԱՖ օրենքի պահանջներին համապատասխան ժամկետում:

13.2. Կասեցումը կարող է ուժը կորցրած ճանաչվել՝

13.2.1. ԼՄ որոշմամբ կամ ԼՄ սեփական նախաձեռնությամբ,

13.2.2. ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակցի միջնորդությամբ, եթե մինչև կասեցման ժամկետի ավարտը պարզվում է, որ ՓԼ/ԱՖ կասկածը հիմնավոր չի եղել:

13.3. ԼՄ կողմից կասեցումը ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ համապատասխան որոշումը ստանալու դեպքում ՓԼ/ԱՖ պատասխանատու աշխատակիցն այդ մասին անմիջապես տեղեկացնում է ՀՍՍ-ին՝ կասեցումը վերացնելու համար:

ԳԼՈՒԽ 14. ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ, ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

14.1. Ընկերությունը պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն - ԼՄ-ին տրամադրում է՝ համաձայն ԼՄ կողմից սահմանված իրավական ակտերի պահանջների:

14.2. Ընկերությունը, թիվ 106 հաշվետվական ձևով («XML» տարբերակով), ԼՄ-ին ներկայացնում է ստորև թվարկված գործարքներից գործողություններից յուրաքանչյուրի վերաբերյալ հաշվետվություն՝

14.2.1. կասկածելի գործարք կամ գործարար հարաբերություն՝ անկախ դրանցում ներգրավված գումարի չափից,

14.2.2. կասեցված գործարք կամ գործարար հարաբերություն,

14.2.3. գույքի սառեցում,

14.2.4. պարտադիր տեղեկացման ենթակա գործարք, որն իր մեջ ներառում է անկանխիկ գործառնություններ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 20 միլիոն դրամը, ինչպես նաև կանխիկի հետ կապված գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 5 միլիոն դրամը:

14.3. Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացվում, հետևյալ գործարքների դեպքում՝

14.3.1. ՀՀ գանձապետական պարտատոմսերի կամ ՀՀ ԿԲ կողմից թողարկվող պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման շրջանակներում գնումներ,

14.3.2. երկրորդային ֆինանսական շուկայում երկու մասնագիտացված անձանց միջև իրենց հաշվին և իրենց անունից կնքվող գործարքները, (օրինակ՝ երկրորդային շուկայում վաճառվող/ձեռք բերվող արժեթղթերի առուվաճառքը, ռեպո և հակադարձ ռեպո գործարքները, սվոփ գործարքները, միջբանկային ավանդները, վարկերը և այլն),

14.3.3. Ընկերության կողմից սեփական կարիքների համար և ընթացիկ գործունեության ապահովման նպատակով կատարվող գնումներ (օրինակ՝ գովազդային ծախսեր, ավտոմատ գանձման մեքենաների լիցքավորում, ինկասացիոն գործարքներ և այլն)՝ բացառությամբ իր հաճախորդներից ֆինանսական ակտիվների գնումների,

14.3.4. Հաճախորդի հետ կնքված և նախկինում հաշվետվությամբ ներկայացված գործարքներում փոփոխությունները, եթե դրանք չեն հանդիսանում գործարքի գումարի կամ արժույթի փոփոխություն:

ԳԼՈՒԽ 15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

15.1. Ներքին աուդիտի ղեկավարը պատասխանատու աշխատակիցը տարեկան պարբերականությամբ ժողովին ներկայացնում է, ՓԼ/ԱՖ կանխարգելմանն ուղղված միջոցառումների տարեկան ծրագիր և նախորդ տարվա վերաբերյալ հաշվետվություն:

ԳԼՈՒԽ 16. ՓԼ/ԱՖ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

16.1. Անձնակազմի կառավարման ստորաբաժանման հետ համատեղ՝ ՆԴՍ-ն տարեկան պարբերականությամբ իրականացնում է ՓԼ/ԱՖ կանխարգելման թեմայով ուսուցում ընկերության բոլոր աշխատակիցների համար՝ ներառյալ Ընկերության ժողովի, գործադիր մարմնի և ներքին աուդիտի համար:

16.2. Ուսուցումն կարող է իրականացվել ինչպես առերես կամ առցանց, այնպես էլ պրեզենտացիոն նյութերի ներկայացմամբ, ինչի արդյունքում աշխատակիցները անցնում են թեստավորում՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման վերաբերյալ գիտելիքների գնահատման նպատակով:

16.3. Նոր ընդունված աշխատակիցների համար ՓԼ/ԱՖ թեմայով ուսուցումը կատարվում է աշխատանքի ընդունումից հետո երեք ամսվա ընթացքում:

16.4. Ընկերության կողմից ՓԼ/ԱՖ կանխարգելմանն ուղղված աշխատակիցների ուսուցմանը և գիտելիքների գնահատմանն առնչվող բոլոր նյութերը, ինչպես նաև՝ ուսուցմանը մասնակցած անձանց տվյալները հաշվառվում և պահպանվում են առնվազն 5 տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 17. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

17.1. Սույն Ընթացակարգը, ներառյալ՝ դրանում կատարվող փոփոխությունները և/կամ լրացումները ընդունվում և/կամ ուժը կորցրած են ճանաչվում ժողովի որոշմամբ և ենթակա է առնվազն տարեկան վերանայման: Սույն Ընթացակարգին կից ուղեցույցները, դրանում կատարվող փոփոխություններն ու հավելվածները ընդունվում և/կամ ուժը կորցրած են ճանաչվում Գործադիր մարմնի հրամանով: